«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝
«Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcararatarmenia.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26.09.2025թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Արփի Լազարյան
	Հենրիկ Խաչատրյան

Վարույթ՝ ՊԼ-034

Խախտում՝

1. «Արարատ Արմենիա ՖԱ» ԲԲԸ Գլխավոր տնօրեն Պողոս Գալստյանի կողմից խաղը սպասարկող անձնակազմի հասցեին հայհոյանք հնչեցնելը (Հավելված 1 Ա, 32-րդ կետ)
2. «Արարատ-Արմենիա» թիմի երկրպագուների կողմից խաղադաշտ շիշ նետելը (Հավելված 1 Ա, 22-րդ կետ)
3. «Արարատ-Արմենիա» թիմի երկրպագուների կողմից մրցավարների հասցեին հայհոյանք թույլ տալ (Հավելված 1 Ա, 21-րդ կետ)
4. «Արարատ-Արմենիա» թիմի երկրպագուների կողմից 12 հրավառ նյութեր կիրառելը (Հավելված 1 Ա, 25-րդ կետ)
5. «Նոա» թիմի երկրպագուների կողմից հրավառ նյութեր կիրառելը (Հավելված 1 Ա, 25-րդ կետ)
6. «Արարատ-Արմենիա» թիմի ֆուտբոլիստ Ուելտոն Նունյես Կարվալյո Ժունիորի (58407) գնդակի համար պայքարում շատ կոպիտ խախտում կատարելը (Հավելված 1 Բ, 14-րդ կետ)

Առաջնություն՝ Fastex Պրեմիեր Լիգա

Խաղ՝ «Արարատ-Արմենիա»-«Նոա», 20.09.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Կասեցնել «Արարատ Արմենիա ՖԱ» ԲԲԸ Գլխավոր տնօրեն Պողոս Գալստյանի՝ պատվավոր հյուրերի (VIP) առանձնացված գոտում գտնվելու իրավունքը 12 (տասներկու) օր ժամկետով: Պատասխանատվության միջոցը տարածվում է 2025

թվականի սեպտեմբերի 27-ից սկսած: Պատասխանատվության միջոցը տարածվում է ՀՖՖ հովանու ներքո անցկացվող Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգա առաջնության հանդիպումների վրա:

2. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 22-րդ հոդվածի 3-րդ կետը՝ համակցել սույն վարույթի 2-րդ, 3-րդ, և 4-րդ կետերով նշված կարգապահական խախտումների համար նախատեսված կարգապահական պատասխանատվության միջոցները և հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի ինըհարյուրվաթսունապատիկի՝ 960,000 ՀՀ դրամի չափով:

3. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նախազգուշացում»: *«Նախազգուշացում» ստացած ֆուտբոլային սուբյեկտի կողմից նույն մրցաշրջանի ընթացքում երկրորդ և ավելի անգամ նույն կարգապահական խախտումը թույլ տալու դեպքում «նախազգուշացում» կարգապահական պատասխանատվության միջոցն այլևս չի կարող կիրառվել:*

4. «Արարատ-Արմենիա» թիմի ֆուտբոլիստ Ուելտոն Նունյես Կարվալյո Ժունիորին (58407) որակազրկել 2 (երկու) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի սեպտեմբերի 20-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի

չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։

- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։